

Էդուարդ Ղանիեյան, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը), Ե., «Մեկնարկ» հրատ., 2017, 240 էջ:

Այսօր էլ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից է արդիական հնչեղություն ունեցող Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: 103 տարի առաջ երիտթուրք ոճրագործները ծրագրավորված կերպով իրականացրին հայ ժողովրդի ցեղասպանության, բռնի տեղահանության, հայրենազրկման ու Արևմտյան Հայաստանի հայաթափման քաղաքականությունը: Հայերի դեմ կիրառվեց մի հանցանք, որը հետագայում՝ 1944 թ. ազգությամբ հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինին ուղղորդեց ստեղծել «գեոնցիդ» (ցեղասպանություն) եզրույթը: Ապացուցված է այն իրողությունը, որ ցեղասպանության հանցանքը արպես միջազգային օրենքով պատժելի հանցագործություն որակելու վերաբերյալ Լեմկինի մտահղացման դրդապատճառը Հայոց ցեղասպանության՝ որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանության սարսափներն էին: Լեմկինի ստեղծած եզրույթից անցել է 74 տարի, սակայն հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հատուցման հարցը դեռևս լուծված չէ: Թեև աշխարհի երկու և կես տասնյակից ավելի խորհրդարաններ, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, եկեղեցիական համաշխարհային կառույցներ, քաղաքների քաղաքապետարաններ, ԱՄՆ-ի 48 նահանգներ. ընդունել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, սակայն Թուրքիան շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը, որը 2005 թ. համարել է իր արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը, մեկ անգամ ևս ապացուցելով, որ հանդիսանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Հայոց ցեղասպանության կազմակերպիչների անպատժելիությունն էր, որ մարդկության դեմ ուղղված նոր հանցագործություններ ծնեց, ինչպիսիք Հոլոքոստն էր, ստալինիզմի բռնությունները, Կամբոջայում, Ռուանդայում, Բուրունդիում, մեր օրերում Իրաքում եզդիների և քրդերի դեմ կազմակերպած ցեղասպանությունները և այլն: Փաստորեն համաշխարհային հանրության հիշողության կորուստը, պատմությունից դասեր չքաղելը պատճառ հանդիսացավ 20-րդ դարում և 21-րդ դարասկզբում տեղի ունեցած վերը թվարկված ցեղասպանությունների իրագործմանը: Այդ իմաստով, հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդրի ամբողջական լուսաբանման համար խիստ կարևորվում է հայ գաղթականության պատմության բազմակողմանի ուսումնասիրումն ու գիտական լուսաբանումը, քանզի Թուրքիայի ժխտողական քաղաքականության, հայկական քարոզչության լավագույն միջոցը ցեղասպանված զոհերի թվի վիճարկումն է, նրանց թվաքանակի միտումնավոր նվազեցումը: Ահա թե ինչու է կարևորվում հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման հետևանքների գիտական լուսաբանումը, հանձինս եզեղնից մազապուրծ ամբողջ հայ գաղթականության պատմության համակողմանի վերանահանման անչափ բարդ, տարողունակ ու բազմաձախ խնդիրների լուծումը: Ելնելով այս իրողությունից՝ երջանկահիշատակ պատմաբան Էդուարդ Ղանիեյանը, իր թեկնածուական ատենախոսությունը նվիրեց սույն հիմնախնդրի լուսաբանմանը, նպատակ ունենալով աշխարհով մեկ սփռված արևմտահայության խլիպների սոսկ մեկ, բայց ստվար հատվածի՝ Անդրկովկասում ապաստանած հայ գաղթականության 1914-1922 թթ. պատմությունը ներկայացնել հայ ընթերցողներին և հետագա ուսումնասիրողներին: Կատարելով նրա պատգամը, որոշեցինք՝ գրքի խմբագիրն ու գրախոսներս, նրա մահից հետո հրատարակել այս արդիական ու արժեքավոր աշխատությունը, այնպես ինչպես գրված է եղել հեղինակի կողմից, առանց կողմնակի միջամտության:

Աշխատությունն ունի ոչ միայն տեսական, գիտական այլև գործնական ու քաղաքական ծանրակշիռ արժեք: Ինչպես աշխատության ներածականում նշում է Է. Ղանիեյանը՝ «Հայ գաղթականության հարցը ցավոտ խնդիր էր ոչ միայն հայ իրականության համար, այլև միջազգային դիվանագիտության, բավական է ասել, որ ընդհուպ մինչև 1929 թվականը Ազգերի լիգան անպտուղ «քննարկում էր» այն» (էջ 9): Կարևորելով թե-

մայի ուսումնասիրությունը հեղինակը ընդգծում է. «Պատմագիտության առջև լուրջ և տարողունակ խնդիր է դրված՝ տանելու ծավալուն աշխատանքներ՝ հայ գաղթականության ամբողջական պատմությունը կերտելու համար: Դա բավականին աշխատատար և դժարին գործ է, որովհետև եղեռնից վերապրողները թեկուզ և կարճ ժամանակամիջոցում չունեցան մեկ միասնական հանգրվանատեղի. նրանք սփոփված էին մի քանի աշխարհաշրջաններում: Պատմագիտությանը հարկ կլինի ըստ աշխարհաշրջանների առանձին-առանձին ուսումնասիրել հայ գաղթականության պատմությունը, որից հետո միայն մեկ ընդհանուր կապիտալ ուսումնասիրությամբ ամբողջացնել այն» (էջ 10): Ուսումնասիրությունն ընդգրկում է մի ժամանակահատված, որը լի էր վերելքներով ու վայրէջքներով, հաղթական, բայց մեր ժողովրդի համար ավելի շատ ողբերգական իրադարձություններով: Գիրքը շարադրված է հարուստ աղբյուրների՝ Հայաստանի ազգային արխիվի նյութերի (Ֆ. 28, 114, 117, 121, 123, 199, 200, 239), հայերեն ու ռուսերեն տպագիր սկզբնաղբյուրի, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուների, պարբերական մամուլի, գրականության՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն մենագրությունների, հուշագրությունների և այլ գրքերի ու հոդվածների հիման վրա, ինչպես նաև այդ ժամանակահատվածում տարածաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների բարդ, դժվարին ու վիճահարույց խնդիրների համատեքստում: Հիմնահարցի ուսումնասիրության բարդությունը հեղինակը բացատրում է ոչ միայն արխիվային նյութերի հակասական ու կցկտուր լինելով, հայ գաղթականության վերաբերյալ բարեխիղճ, գիտական մշակման ենթարկված վիճակագրության բացակայությամբ, այլև նրանով, որ «գաղթականությունը սփսված լինելով տարբեր երկրամասերում, եղել է բավականին հոսուն՝ կապված ժամանակի քաղաքական ցնցումների հետ» (էջ 21): Աշխատությունը բաղկացած է հիմնախնդրի էությունը, ուսումնասիրության կարևորությանը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունն ներկայացնող, ժամանակաշրջանը հստակեցնող ներածությունից ու հիմնախնդրի հետազոտությանն նվիրված երեք գլուխներից, վերջաբանից և գրականության ցանկից: Հենց սկզբից՝ անհրաժեշտ է նշել, որ հեղինակին հաջողվել է՝ տալ Կովկասյան ռազմաճակատի շրջանում և Անդրկովկասում գտնվող հայ գաղթականության 1914-1922 թթ. շարժն ու կացությունը և հնարավորության սահմաններում ճշտել գաղթականության իրականության մոտ թվաքանակը:

Քննարկելով Օսմանյան կայսրության 19-րդ դ. վերջին քառորդից և երիտթուրքերի կողմից 20-րդ դարասկզբին պետական ուսմունք հռչակած համաթուրքականության (պատթուրքիզմի) վարդապետության, հայերի ցեղասպանությունը, որպես հայկական հարցի լուծման թուրքական եղանակի կիրառման հանգամանքները, հեղինակը հանգում է այն կարևոր եզրակացության, որ թուրքական քաղաքականությունը սկսեց գործնականում կիրառվել 19-րդ դ. 90-ական թվականներից և մի քանի փուլերով շարունակվեց մինչև 1922 թ.: Նա ընդգծում է, որ «ցեղասպանության պատասխանատուն թուրք պետականությունն է, որովհետև այն իրագործվեց սուլթանական, երիտթուրքական և քենալական վարչակարգերի կեղմից շարունակաբար» (էջ 5):

«Արևմտահայերի ցեղասպանությունը և գաղթականության շարժը, կացությունն ու թվակազմը 1914-1917թթ.» խորագիրը կրող առաջին գլխում արխիվային նորահայտ նյութերի, պարբերական մամուլի և զանազան վավերագրերի օգտագործմամբ է. Դանիելյանը բացահայտել է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում թուրքական վարչական և ժողովրդագրական քաղաքականության էությունը, նպատակն ու հետևանքները, հայ բնակչության ընդհանուր թվաքանակում արհեստականորեն մեծացնելով մահմեդական բնակչության բաժինը: «Բազմահազար մուհաջիրների (մուսուլման գաղթականներ) վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանում, վերջինիս վարչական քարտեզի պարբերական վերածնունդները, որոնք զուգակցվում էին հայկական նահանգների թուրքաբնակ և քրդաբնակ շրջանների կցմամբ կամ հակառակը, ինչպես նաև տնտեսական և ազգային հալածանքների միջոցով արևմտահայերի զանգվածային արտագաղթի դրդելը՝ այդ նպատակին ուղղված գործնական միջոցառումներ էին», -գրում է հեղինակը (էջ 28): Բերելով թուրքական պաշտոնական սալնամեի (վիճակագրական տարեգիրք) տվյալները՝ է. Դանիելյանը շեշտում է, որ 19-րդ դարավեր-

ջին կայսրության արևելյան երկրամասում ապրում էր 17 մլն 260 հազար մարդ, որից 3 մլն 600 հազարը (մոտ 21%-ը) հայեր էին, մինչդեռ Կ. Պոլսում հավատարմագրված տե-րությունների դեսպաններին ուղղված պատասխան հուշագրում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբեդին փաշան, կեղծելով փաստերը, նշում էր, որ հայկական նա-հանգներում Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիի և Սվազի հայերի պաշտոնական մարդահամարը, իբրև ցույց է տվել, որ նրանք՝ (հայերը), այդ տարածքում կազմում են բնակչության ընդամենը 17%-ը, իսկ մահմեդականները՝ 79%-ը, մոռանալով, որ դրանք բուն հայկական տարածքներ են, որտեղ հայերը հոծ գանգվածներով էին ապրում, ավելի շատ քան փոքրասիական նահանգներում (էջ 29,30): Վերոնշյալ փաստերից ել-նելով, հեղինակը կատարում է մի կարևոր եզրակացություն, որ «սկսած այդ պահից մինչև օրս թուրքական կողմը կոծկելու համար, իր իսկ ձեռքով կատարած ու կատա-րելիք մեծ ոճիրները, մշտապես նազեցված է ներկայացրել օսմանյան պետությունում հայերի թվաքանակը, «մոռանալով», որ ժամանակի թուրքական աղբյուրները շատ թե քիչ օբյեկտիվ պատկերացում են տվել հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբեր-յալ» (էջ 30): Նշելով ցեղասպանության ծանրագույն հետևանքների, Հայաստանի մեծա-գույն մասի՝ Արևմտյան Հայաստանի իսպառ հայաթափման մասին, որն այսօր գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ, հեղինակը ընդգծում է, որ «հսկայական էին արևմտահայության մարդկային կորուստները: Ըստ հայ և օտար աղբյուրների պատե-րագմից հետո վերապրողների թիվն ընդամենը 592 հազար էր»: Շարունակելով իր միտքը՝ Է. Դանիելյանը գրում է, որ «վայրենի ջարդերին զոհ գնացին նաև շուրջ 500 հա-զար արևելահայեր, որի հետևանքով Արևելյան Հայաստանի հայազրկված շրջանները՝ Ուտիքը, Գանձակը, Փայտակարանը, Դաշտային Արցախը և այլ երկրամասեր բռնակց-վեցին Ադրբեջանին» (էջ 43): Անդրադառնալով և քննարկելով տեղահանված և աք-սորված հայության դաժան ճակատագիրը, հեղինակը “Կապույտ գրքի” թիվ 139 փաս-տաթղթի՝ 1916 թ. փետրվարի 3-ի վիճակագրությամբ արաբական անապատներ բռնա-գաղթված հայ քաղաքացիների թիվը հաշվում է 586000 (էջ 47): Փաստորեն ըստ հեղի-նակի 1916 թ. սկզբներին դեռևս իրենց գոյությունն այս կամ այն կերպ կարողացել էին պահպանել շուրջ 600000 քաղաքացիներ և դա առաջին հերթին շնորհիվ գաղթականների գերմարդկային մաքառումների (էջ 48): 1919 թ. ընթացքում արաբական անապատ-ներից, Կիլիկիա հայրենադարձվեցին շուրջ 200 000 արևմտահայ քաղաքացիներ (էջ 50): Համեմատելով տարբեր հեղինակների վիճակագրական տվյալները՝ Է. Դանիել-յանը նշում է, որ հայ գաղթականների մի ստվար մասը տեղավորվեց գլխավորապես Արարտյան դաշտավայրի և Վրաստանի տերիտորիայում: 650 000 գաղթականներից Հայաստանում կուտակվեց 400 հազար հոգի, Վրաստանում 150 հազարը (էջ 54):

Բազմաթիվ տպագիր սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի և մամուլի նյութերի օգտագործմամբ Է. Դանիելյանը վերլուծում է հայոց ցեղասպանության դաժան հետևանքները՝ ընդգծելով ռուսական բանակների կատարած 4 նահանջների /1914 թ. նոյեմբեր, դեկտեմբեր, 1915 թ. հունիս և 1916 թ. հուլիս/ չարաղետ հետևանքները հայ ժողովրդի պատմական ճակատագրում (էջ 56): «Դրանք հնարավորություն տվեցին երիտթուրքական վարչակարգին իրագործելու ցեղասպանության ծրագիրը և իսպառ հայաթափելու Արևմտյան Հայաստանը,- եզրակացնում է հեղինակը,- ապա ավելաց-նում, որ դրա արդյունքում տասնյակ հազարավոր գաղթականներ, թողնելով իրենց բնակավայրերը, շարժվել են Արևելյան Հայաստան» (էջ 56):

Հանգամանորեն քննարկելով հայ գաղթականության խնդիրը, Է. Դանիելյանը ա-ռանձնացնում է նրանց երեք կատեգորիաներ՝ արևմտահայ, արևելահայ և պարսկահայ գաղթականություն: Բազմաթիվ վիճակագրական տվյալների համեմատական վերլու-ծությամբ նա աղյուսակների միջոցով ցույց է տալիս Հյուսիսային Կովկասում, ապա Անդրկովկասում կենտրոնացած գաղթականության համեմատաբար ճշգրտված տվյալ-ները, ապա Հայաստան տեղափոխված արևմտահայ գաղթականության թվական տվյալները: Ըստ Է. Դանիելյանի տվյալների արևմտահայ և պարսկահայ փախուստա-կանների թիվը կազմում էր շուրջ 207.473, իսկ հայ փախստականների ընդհանուր թիվն Անդրկովկասում և Պարսկաստանում 1915 թ. ամռանը 228.293 էր, որից շուրջ 200.000-ը

փախստականներ էին, մնացյալը՝ պարսկահայ և արևելահայ փախստականներ (էջ 67): Արխիվային համապատասխան նյութերի հիման վրա նա հայ գաղթականների ընդհանուր թիվը, ըստ 1916 թ. մեկօրյա ցուցակագրության հաշվում է 184.859 (էջ 69): Աշխատության այս գլխում է. Դանիելյանի կատարած վերլուծությունները և գաղթականության թվակազմի վերաբերյալ կազմած աղյուսակները ցույց են տալիս, որ Անդրկովկասում երբեք 300 հազար արևմտահայ գաղթական չի եղել: Պարզապես այդ թվաքանակում արտացոլված է ոչ միայն հայ, այլև մյուս ազգությունների (հույն, ասորի, մուսուլման) գաղթականների թվակազմը (էջ 79): Հեղինակի հաշվարկներով Արևմտյան Հայաստանում հայերի թիվը 1917 թ. կազմում էր ընդամենը 142.425 մարդ (էջ 93): Գլխի վերջում արված կարևոր եզրակացությունն այն է, որ “Իրականությանը չի համապատասխանում այն կարծիքը, թե ցեղասպանությունից հետո Անդրկովկասում ապաստան էին գտել 350 հազար արևմտահայ գաղթականներ” (էջ 99): Երկրորդ գլխում է. Դանիելյանը քննարկել է արևելահայերի ցեղասպանությունը և վերլուծել գաղթականության շարժը, կացությունն ու թվակազմը 1918-1920 թթ.: Այս գլխում արխիվային համապատասխան նյութերի վերլուծությամբ հեղինակը ցույց է տվել, թե ինչպես դեպի Անդրկովկաս թուրքական զորքերի 1918 թ. արշավանքի ընթացքում նրանք արևելահայերի զանգվածային ջարդեր կազմակերպեցին Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ շրջաններում, որի արդյունքում կոտորածներին զոհ գնացին շուրջ 500 հազար արևելահայեր, 600 հազարը դարձան գաղթականներ: Նրանցից ըստ հեղինակի հաշվումների՝ 400 հազարը խուսափելով կոտորածներից խոնվեցին Սևանա լճի ավազանում, մյուս մասը Վրաստանի վրայով շարժվեց Հյուսիսային Կովկաս և Ռուսաստանի հարավային շրջաններ (էջ 138): Է. Դանիելյանը անդրադառնալով Հայաստանի նորաստեղծ հանրապետությունում գաղթականության խնդրին, ընդգծում է, որ հենց սկզբից այն հռչակվել էր պետական գործ, սակայն փաստերով հիմնավորվում է, որ այս մարզում կառավարության ձեռնարկած միջոցառումները շոշափելի արդյունք չէին կարող տալ: Նա դա բացատրում է երեք օբյեկտիվ պատճառներով. 1-ին՝ Արևելյան Հայաստանի մեծ մասի, մասնավորապես հացառատ շրջանների զավթումը թուրքերի կողմից, 2-րդ՝ հանրապետության շրջափակումը Ադրբեջանի և Վրաստանի կողմից և 3-րդ՝ միջոցների սղությունը և այլն: Քննարկելով 1919 թ. սկզբներից գաղթականության օգնության խնդիրը, հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես այդ գործը դրվեց համեմատաբար իրական հիմքերի վրա, որին մեծապես նպաստեց Արևելյան Հայաստանում թուրքերի զավթած տարածքների ազատագրումը և տեղ հասած ամերիկյան պարենային օգնությունը: Երրորդ գլխում համապատասխան փաստերի վերլուծությամբ հեղինակը քննարկում է գաղթականության հարցը Խորհրդային Հայաստանում 1920-1922 թթ.: Անդրադառնալով գաղթականության խնդրի լուծման դժվարություններին՝ Է. Դանիելյանը առանձնացնում է հետևյալ պատճառները՝ երկրի ծայրաստիճան քայքայված վիճակը, նյութական միջոցների սղությունը, հանրապետության սակավահողությունը, բուշկիկների կողմից հայկական հողերի (Կարս, Նախիջևան և այլն) նվիրաբերումը թուրքերին, որոնք հնարավորություն չտվեցին կարճ ժամանակամիջոցում լուծել գաղթականության հարցը: Բավական է ասել, որ նույնիսկ 1926 թ. հանրապետությունում դեռևս կային 50 500 հողազուրկ գաղթականներ (էջ 140, 141): Հեղինակը վիճարկում է 1920-1922 թվականներին Խորհրդային Հայաստանում ապաստանած հայ գաղթականության համար որպես ստուգիչ թիվ շրջանառության մեջ դրված 200 հազարը: Որքանով է այդ թիվը համապատասխանում իրականությանը, որն է դրա սկզբնաղբյուրը և որքանով է այն հավաստի: Այս ուղղությամբ հեղինակի պրպտումները, համապատասխան փաստաթղթային նյութերի քննությունը բերել է այն եզրակացության, որ շրջանառության մեջ դրված այդ թիվն իրական հիմք չունի (էջ 142): Ըստ հեղինակի 1920-1922 թ. Խորհրդային Հայաստանում ապաստանած հայ գաղթականության մոտավոր թիվը կարող է լինել 140-150 հազար, այդ թվում և արևմտահայ, և Կարսի, Սուրմալուի ու Նախիջևանի շրջանների արևելահայ գաղթականները (էջ 153): Վերլուծելով գաղթականության նկատմամբ Խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը 1920-1922 թթ., հեղինակը այն բաժանում է երկու փուլերի՝ 1) 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ ապրիլ,

2) 1921 թ. ապրիլից սկսած: Է. Դանիելյանը հանգամանորեն անդրադառնում է այն պատճառներին, որոնք հնարավորություն չտվեցին բավարար ուշադրություն դարձնելու գաղթականության խնդրին (էջ 154): Համապատասխան փաստերի վերլուծությանը հեղինակը ցույց է տալիս փետրվարյան ապստամբությանը արևմտահայ գաղթականության մասնակցությունը, պատճառները, և բացահայտում դրա նշանակությունը գաղթականության հարցում բոլշևիկների նոր, ավելի հոգատար, գործնական և հետևողական քաղաքականության իրականացման գործում (էջ 164-165): «1920 թ. վերջին – 1921 թ. սկզբներին Խորհրդային Հայաստան/ վերադարձան շուրջ 100 հազար ադրբեջանցիներ, - գրում է հեղինակը, որից հետո բոլշևիկյան իշխանությունները սկսեցին զանգվածաբար վտարել նախկինում նրանց բնակավայրերում տեղավորված արևմտահայ գաղթականներին: Բոլշևիկների նման քաղաքականությունը վերանայվեց միայն 1921 թ. փետրվարյան համաժողովրդական ապստամբությունից հետո, եզրափակում է Է. Դանիելյանը» (էջ 214, 215):

Վերլուծելով բոլշևիկների ագրարային քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում և դրա ազդեցությունը հայ գաղթականության վրա, հեղինակը հանգում է այն կարևոր եզրակացություն, որ «հայ ժողովրդի թիկունքում քեմալականների հետ կատարած խայտառակ գործարքը, հայկական հողերի նվիրաբերումը Թուրքիային՝ այդ քաղաքականության անմիջական հետևանքն էին: Բայց հայկական հարցը դեռևս բաց հարց էր, որը քննարկվելու էր Լոզանի խորհրդաժողովում և կար նրա օրինական տերը՝ արևմտահայ գաղթականությունը: Հարկավոր էր խաբել նրան, համախմբել բոլշևիկների գաղափարների շուրջը և հայկական հարցի լուծումը շաղկապել այսպես կոչված համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ» (էջ 216) :

Վերջաբանում հեղինակը 13 էջի վրա, 16 կետերով հանրագումարի է բերել աշխատանքի հիմնական արդյունքները և կատարել տրամաբանված և համոզիչ եզրահանգումներ ու ընդհանրացումներ:

Այսպիսով, Է. Դանիելյանի սույն գիտական ուսումնասիրությունը կարևոր ներդրում է հայ գաղթականության պատմության հետազոտության ոլորտում, հայ պատմագիտության մեջ: Այն կարող է հաստատուն հիմք դառնալ այս բնագավառի հետագա ուսումնասիրությունների համար: Այս արժեքավոր աշխատության հրատարակումը նաև յուրահատուկ տուրք է մեր լավագույն գործընկերոջ հիշատակին:

Էդիկ Մինասյան